

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վահե ԲՈՅԱԽՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. ֆինանսատնտեսական ճգնաժամ, ՀՆԱ, ՀՆԱ-ի աճ, դրամական առաջարկ, բանկային տոկոս

Տնտեսական հարաբերություններն, իրենց մեջ խտացնելով և ամփոփելով հասարակության զարգացման գրեթե բոլոր կողմերը, միաժամանակ այն բարոմետրն են, որոնք լավագույն ձևով բնութագրում են հասարակության «ջերմաստիճանը» և դրանում տեղ գտած «հիվանդությունները»: Եվ քանի որ տնտեսական հարաբերությունները հասարակության կյանքի միայն մի մասն են կազմում (իսկ մյուս բաղկացուցիչներն են՝ բարոյա-հոգեբանական, սոցիալական, քաղաքական, մշակութային, պատմական, տարածաշրջանային, աշխարհաքաղաքական և մյուս հարաբերությունները), ուստի՝ երբ օգտագործվում է «տնտեսական ճգնաժամ» հասկացությունը, ապա պետք է ընդունել (կամ առնվազն՝ ենթադրել), որ այն չի կարող լինել միայն «զուտ» տնտեսական այն պարզ տրամաբանությամբ, որ «տնտեսականը» հասարակության, որպես ամբողջի կամ համակարգի միայն մի մասն է՝ կարևոր կամ ոչ կարևոր, որը, ի դեպ, հասարակությունը և նրա անդամներն են որոշում: Ուստի հասարակության զարգացմանը վերաբերող այս կամ այն կողմի անկայունությունը (տնտեսագետների կարծիքով ճգնաժամը հենց տնտեսության անկայունության կամ անկայուն վիճակի դրսևորման ձևն է) չի կարող բացատրվել միայն որոշակի հարաբերությունների խաթարմամբ, քանի որ այն բխում է ոչ միայն տվյալ խումբ հարաբերությունից կամ հարաբերություններից, այլև դրանց ամբողջությունից: Ու թեև մասն ամբողջից փոքր է, սակայն բոլոր դեպքերում այն ամբողջի մի հատվածն է:

Ինչպես աշխարհի բազմաթիվ երկրներում, այնպես էլ մեր հանրապետությունում, երբ տնտեսության մեջ նշմարվում են ճգնաժամային երևույթներ (հիշեցնենք, որ այդպիսիք կարող են լինել ՀՆԱ-ի աճի դանդաղումը կամ անկումը, գործազրկության մակարդակի բարձրացումը, արտագաղթը և ընդհանրապես բնակչության կենսամակարդակի անկումը կամ, եթե կարճ ձևակերպելու լինենք «կյանքի թանկացումը») կառավարությունները դրա պատճառները փնտրում են ամեն տեղ, բայց ոչ երբեք սեփական երկրում: Ընդունված է ասել, օրինակ, որ ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական մեղավորը ԱՄՆ-ն է, որի տնտեսության անկայունությունը ռեզոնանսի սկզբունքով անկայունացրեց ամբողջ համաշխարհային տնտեսությունը, և առանձին վերցրած ազգային տնտեսությունները: Ինչը ենթադրում

է, որ մեղավոր են բոլորը, սակայն ամենևին էլ ոչ երկրի իշխանությունները (սա իհարկե լավագույն դեպքում, քանի որ աշխարհի առանձին երկրների կառավարություններ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) չընդունեցին նույնիսկ սույն փաստը, ենթադրելով, որ իրենց տնտեսությունը այնքան հզոր է (որը շրջապատված է, հավանաբար, չինական պարսպով), որին խփվելով ջարդուփշուր են լինում համաշխարհային ճգնաժամի ալիքները:

Ասենք ավելին, եթե ճգնաժամային (ընդունված է այն համարել 2008-2009թթ.) տարիներին տարածված էր այն բացատրությունը, ըստ որի տնտեսության անկումը պայմանավորված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, ապա այժմ ընդհակառակը աշխարհի զարգացած երկրները (ամենից առաջ նկատի ունենք Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրամիության երկրները) զարգացող երկրներից «ձգում և տանում են» այդ երկրների արտադրության հիմնական աճի գործոնները (ամենից առաջ կապիտալը և աշխատուժը), վերջիններիս թողնելով առանց աճի աղբյուրների և միջոցների: Մինչդեռ պետք է նկատել, որ թե՛ ՏՀԶԿ, ԵՄ և թե՛ նույնիսկ անկում չարձանագրած, սակայն տնտեսական աճի տեմպերի դանդաղեցում նկատած երկրներում (օրինակ, Չինաստանը) մշակել են հստակ և բնակչության համար հասկանալի ծրագրեր և միջոցառումներ ճգնաժամից դուրս գալու համար: Իսկ երկրների մի խմբում այդպես էլ չմշակվեցին այդպիսի ծրագրեր, բացի ընդհանուր բնույթի և ընդհանուր կամ ոչինչ չասող կոչերից, ինչպիսիք են, օրինակ ներդրումային կամ գործարարության միջավայրի բարելավումը կամ կատարելագործումը: Իսկ նույնիսկ այդ պայմաններում, հստակ ծրագրի բացակայության պայմաններում նկատվում է ոչ միայն ներդրումների սով, այլ նաև բնակչության մի մասի (մեզանում ներկայումս շուրջ 30%-ի) աղքատության խորացում և արտագաղթ, որն ուղեկցվել է արտաքին պարտքի զգալի ավելացմամբ, դրանով իսկ «ճգնաժամով» պայմանավորված դժվարությունները ներկա սերունդների ուսերից տեղափոխելով ապագա սերունդների ուսերին:

Այնուհանդերձ, որքան հեռանում ենք 2008թ.-ից (իսկ մեզանում 2009թ.-ից, երբ ՀՆԱ-ն պաշտոնապես նվազեց 14.1%-ով (դրամական արտահայտությամբ) և 25.8%-ով դոլարային արտահայտությամբ, երբ ՀՀ ՀՆԱ-ն 2008թ. կազմում էր 3568.228 մլրդ դրամ, 2009թ.՝ 3141.651 մլրդ դրամ, իսկ դոլարային արտահայտությամբ համապատասխանաբար՝ 11662 մլն դոլար և 8648 մլն դոլար)¹, այնքան զգում ենք տնտեսական ճգնաժամի հարվածի ուժգնությունը մեր տնտեսությանը, թեկուզ միայն ելնելով այն փաստից, որ նախաճգնաժամային մակարդակի (2008թ.) ՀՆԱ-ի մեծությանը չենք հասել

¹ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 23:

ո՛չ 2010թ. (ՀՆԱ կազմել է 3460.203 մլրդ դրամ, 9260 մլն դոլար), ոչ 2011թ. (ՀՆԱ-ն կազմել է 3777.946 մլրդ դրամ, 10142 մլն դոլար), ո՛չ 2012թ. (ՀՆԱ-ն կազմել է 4266.5 մլրդ դրամ, 10619 մլն դոլար), ո՛չ 2013թ. (ՀՆԱ-ն կազմել է 4555.6 մլրդ դրամ, 11121 մլն դոլար), ո՛չ 2014թ. (ՀՆԱ-ն կազմել է 4828.6 մլրդ դրամ, 11610 մլն դոլար), ո՛չ 2015թ. (ՀՆԱ-ն կազմել է 5032.1 մլրդ դրամ, 10529 մլն դոլար) և ոչ էլ 2016թ.-ին (ՀՆԱ-ն կազմել է 5067.9 մլրդ դրամ, 10525 մլն դոլար) (տե՛ս, աղյուսակ 1-ը): Այսինքն կարող ենք ամրագրել, որ ձգնաժամային իրավիճակը պայմանավորված է ոչ թե որոշակի ժամանակահատվածի (օրինակ կես տարվա) ՀՆԱ-ի նվազմամբ, այլ նախաձգնաժամային տարվա համեմատությամբ հաջորդ տարիների ՀՆԱ-ի մեծությամբ, եթե այն ավելի փոքր է, ուրեմն հասարակությունը և նրա տնտեսությունը գտնվում են ձգնաժամի մեջ: Հենց որ ՀՆԱ-ն գերազանցում է նախաձգնաժամային տարվա ՀՆԱ-ի մեծությունը, կարելի է պնդել, որ երկիրը դուրս է եկել ձգնաժամից: Եվ եթե առաջնորդվենք այս չափանիշով, ապա կարող ենք պնդել, որ ՀՀ-ը դեռևս ձգնաժամից դուրս չի եկել:

Ահա այստեղ է, որ ծագում է հիմնական հարցը. ի՞նչ անել, ինչպիսի՞ ծրագիր մշակել, որոնք թույլ կտան արագորեն դուրս գալ ձգնաժամային իրավիճակից: Հանրահայտ տնտեսագիտական ճշմարտություն է այն փաստը, որ ձգնաժամից դուրս գալու համար անհրաժեշտ է խթանել կամ խրախուսել բարիքների (ապրանքների և ծառայությունների) թողարկումը: Սա այն ուղին է, որը կոչվում է հիմնական օղակի կանոն, երբ բարիքների ծավալի ավելացման օգնությամբ հնարավոր կդառնա հասարակության հետագա առաջընթաց զարգացումը: Տնտեսության խթանում ասելով ամենևին նկատի չունենք այնպիսի իրավիճակ, երբ քաղաքացիների մեծ մասի կենսամակարդակը նվազում է կամ էլ ավելանում է գործազուրկների քանակը:

Տնտեսական ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային և համաշխարհային ձգնաժամների քաղած դասերը լավ են ուսումնասիրված և տնտեսագիտության տեսությունից հայտնի է, որ եթե երկրի տնտեսությունը աճում է բարձր տեմպերով, ապա անհրաժեշտ է բարձրացնել բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափը (դրանով իսկ անցում կատարել «է-ժան» փողերից «թանկ» փողերի), բարձրացնել հարկերի դրույքաչափերը (դրանով թուլացնել գործարարների շահագրգռվածությունը թողարկելու ավելի շատ բարիքներ) և «փակի» տակ պահել ներդրումների ծավալը (զսպելով դրանց աճը հնարավորություն չի մնում ավելացնելու արտադրական կարողությունները, որոնք բարիքների ավելացման մայրուղին են): Եվ երբ տնտեսությունը կորցնում է զարգացման թափը և նկատվում է տնտեսական աճի դանդաղում կամ էլ բարիքների ծավալների նվազում անհրաժեշտ է խթանել՝ ավելացնելու աճի աղբյուրները կամ հնարավորությունները: Այս

դեպքում նշված գործընթացների իրականացման համար տնտեսագիտության զինանոցը առաջարկում է օգտագործել հետևյալ միջոցները (գործիքները)՝ նվազեցնել բանկային տոկոսադրույքները, հարկերը, տնտեսության մեջ խրախուսել ներդրումների ծավալների ավելացումը, այդ թվում նաև պետական միջոցներից, ավելացնել զբաղվածությունը և սպառումը: Այսինքն՝ վարվել առաջին սցենարին ճիշտ հակառակը: Տնտեսության ակտիվացման այս ամբողջական համակարգի հեղինակը, անգլիացի ականավոր տնտեսագետ Ջոն Մեյնարդ Բեյնսն է (1883-1946), ով պետական քաղաքականության ավելացման իր հայացքները շարադրել է «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն»² բարձրարժեք աշխատության մեջ, որը առաջին անգամ լույս է տեսել 1933թ.-ին Լոնդոնում: Մեծ դեպրեսիայից դուրս գալու համար աշխարհը պարտական է մեծն Բեյնսին, քանի որ նրա մշակած դեղատոմսերով կապիտալիզմը 1930-ական թվականներին պար-զապես փրկվեց կործանումից: Տնտեսական ճգնաժամից դուրս գալու այդ ամբողջական համակարգը կոչվում է քեյնսիզմ, իսկ քաղաքականությունը՝ քեյնսիականություն: Քեյնսիականության կամ տնտեսության պետական կարգավորման տեսության հիմքում ընկած է մակրոտնտեսական (այս հասկացության համար տնտեսագետները պարտական են Ջ.Մ.Բեյնսին) գործիքների կիրառմամբ տնտեսական քաղաքականության ակտիվացումը և պետության լայն մասշտաբներով ու միջոցներով մասնակցությունը կարգավորման այդ գործընթացին: Քեյնսիականությունը, որպես տնտեսության պետական կարգավորման և, հետևաբար, տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություն լայն տարածում և կիրառում ստացավ մինչև անցած դարի 70-ական թվականների կեսերը, մինչև համաշխարհային տնտեսական թատերաբեմում հայտնվեց մոնետարիզմը, հանձինս նրա ամենակարկառուն ներկայացուցչի՝ Միլտոն Ֆրիդմանի տեսության: Իսկ ինչով էր պայմանավորված իրերի վիճակի նման կտրուկ փոփոխությունը: Կարճ պատասխանը՝ համաշխարհային տնտեսության զարգացումներով և դրանց կառուցվածքային արմատական փոփոխություններով: Բանն այն է, որ 1970-ական թվականների կեսերին, համաշխարհային տնտեսությունում գների կայունությունը խախտվեց նավթի գների կտրուկ բարձրացման պատճառով: 1979-1982թթ. ԱՄՆ դաշնային ռեզերվային համակարգը (ԱՄՆ-ի կենտրոնական բանկը) խստիվ կոշտացրեց ֆինանսական քաղաքականությունը՝ զգալիորեն բարձրացրեց տոկոսադրույքները և սահմանափակեց դրամական առաջարկը, ինչը հանգեցրեց ինֆլյացիայի նվազեցմանը: Ի դեպ նույն ԴՌՀ-ը վերջին 5 տարիների ընթացքում, ընդհուպ միջև 2014թ.-ի հունվարի կեսերը, երբ ԴՌՀ-ի նախագահը՝ Բեն Բեռնանկեն հարժեշտ տվեց իր պաշտոնին,

² Ջ.Մ.Բեյնս. «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն», Եր., Տիգրան Մեծ, 2006, 392 էջ:

ԴՌՀ-ի ակտիվները 0.8 տրիլիոն դոլարից հասան 40 տրիլիոն դոլարի, այդպիսով ավելանալով 5 անգամ, ինչը նշանակում է ԱՄՆ տնտեսության մեջ այդ քանակությամբ ավելացնել փողի զանգվածը, որն էլ բավական էր տնտեսության աշխուժացման և վերելքի համար: Այդպիսով, ԱՄՆ տնտեսության վառարանը, պատկերավոր ասած, ստացավ իր առաջիկա տարիների համար վառելքի այն քանակությունը, որն անհրաժեշտ է նորմալ տնտեսական գործունեության և բնականոն զարգացման ու զբաղվածության ապահովման համար: Այդպես ծնվեց պետական կարգավորման (կարգավորվող կապիտալիզմի) նոր համակարգը, երբ տնտեսության ծավալները ավելացան, փողի տոկոսադրույքների բարձրացումը կապիտալը իրական հատվածից ուղղեց դեպի բանկերը, իսկ դանդաղեցման դեպքում տոկոսադրույքների իջեցումը խթանեց սպառման աճը, ինչը ցանկացած տնտեսության առաջնիչ ուժն է, երբ կա պահանջարկ:

2008թ. սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հատկապես զարգացած երկրների կառավարություններից պահանջեց կիրառել ճգնաժամի դեմ պայքարի, ինչպես քեյնսիականության, այնպես էլ մոնետարիստական մեթոդները: Մի կողմից սկսվեց տոկոսադրույքների նվազեցումը (2008թ հունվարի 4.25%-ից այն 2008թ. դեկտեմբերին հասցվեց մինչև 0-0.25%-ի): Սակայն այդ ֆինանսական քայլը չբերեց սպասված արդյունքը, մասամբ այն պատճառով, որ մասնավոր հատվածը ծանրաբեռնված էր պարտքերով և ճգնաժամին «հանդիպած» մարդիկ, սկսեցին դրանք վճարել, դրանով իսկ կրճատելով սպառումը և ներդրումները: Բացի այդ «վատ» (մասնագիտորեն այն անվանվում է անհուսալի) պարտքերի ծավալը տնտեսության մեջ դարձավ զգալի կամ անլուծելի, որպեսզի հիմնախնդիրը հնարավոր լինի լուծել ավանդական կամ դասական տնտեսագիտության առաջարկած մեթոդներով կամ դեղատոմսերով: Ուստի, մյուս կողմից ԱՄՆ կառավարությունը գնաց պետական պարտքը ավելացնելու (բավական է նշել, որ եթե 2008թ. սկզբին ԱՄՆ արտաքին պարտքը կազմում էր 8.95 տրիլիոն դոլար, ապա 2012թ. վերջին այն հասավ 16.2 տրիլիոն դոլարի, իսկ 2016թ.՝ 17.8 տրիլիոն դոլարի), հարկերը չբարձրացնելու և տնտեսության մեջ ներդրումները ակտիվացնելու ճանապարհով (հիմնականում ծանր դրության մեջ հայտնված ընկերություններին և բանկերին վարկեր տրամադրելով և ետ գնելով «կասկածելի» ակտիվները):

Ճգնաժամից դուրս գալու համար ինչպե՞ս վարվեցին ԵՄ երկրները, որոնք մինչև օրս գտնվում են որոշակի դժվարությունների մեջ և դեռևս չեն հաղթահարել նախաճգնաժամային ցուցանիշները: Եթե փորձենք կարճ պատասխանել այդ հարցին, ապա կարող ենք ասել, որ ԵՄ ճգնաժամի դեմ պայքարում իրականացնում է զգուշավոր քայլեր, ինչն էլ հավանաբար չի

բերում ցանկալի արդյունքների: Քննարկենք ԵՄ քայլերը այդ «ճակատում» և անդամ-երկրների ջանքերը հաղթահարելու ճգնաժամի բացասական հետևյալները: Այսօր, երբ ԱՄՆ-ում վերականգնվել է տնտեսական աճը (բավական է նշել, որ 2017թ. առաջին եռամսյակում այն կազմել է 2.4%), ԴՌՀ-ը սկսել է հրաժարվել «արտակարգ» միջոցառումներից: Սկսած 2013թ. դեկտեմբերից ԴՌՀ-ը կրճատեց ամսական ակտիվների գնումը 85 մլրդ դոլարից հասցնելով մինչև 65 մլրդ դոլար: Միևնույն ժամանակ ԱՄՆ տնտեսությունը դեռևս չի կայունացել, որպեսզի հնարավոր լինի հրաժարվել զրոյական տոկոսադրույքի քաղաքականությունից: Բանկային տոկոսադրույքների բարձրացմանը ականատես եղանք 2015թ. վերջերին: Արդյունքում ամերիկացիները հասան իրենց նպատակին՝ թեև պետական պարտքը և բյուջեի պակասուրդը ավելացան և հասան պատմականորեն ռեկորդային չափերի, սակայն տնտեսությունը արագ վերականգնվեց: Այդ ճանապարհով չգնացին եվրոպացիները: Օրինակ, Գերմանիան բոլոր միջոցներով ընդդիմացավ պետական կառավարման մոնետարիստական մեթոդներին՝ չդիմելով զգալի դրամական էմիսիայի (թողարկման): Դրա հետևանքով եվրոպական երկրների տնտեսությունները ճգնաժամից դուրս են գալիս դանդաղորեն, իսկ մի քանիստում էլ շարունակվում է ՀՆԱ-ի նվազումը: Ոչ ոք չէր կարող նույնիսկ ենթադրել, որ ԱՄՆ-ի տարեկան բյուջեի պակասուրդը կարող է հասնել աստղաբախական թվերի՝ 1.41 տրիլիոն դոլարի և դրա հետ մեկտեղ ինֆլյացիան կմնա նվազագույն մակարդակի վրա: Իսկ դա նշանակում է, որ եթե կառավարությունը ցանկանում է աջակցել տնտեսության զարգացմանը և տնտեսական աճին, նա պետք է համակերպվի պարտքային ֆինանսավորման և բյուջեի պակասուրդի հետ, չբարձրացնի հարկերը և սպասի տնտեսական ակտիվության վերականգնմանը:

Անհրաժեշտ է նաև նկատել, որ պետական նախագծերի ֆինանսավորումը բոլոր դեպքերում շարունակում է մնալ զարգացման լրացուցիչ և ոչ թե առաջնահերթ գործոն ճգնաժամից դուրս գալու համար: Ասվածը հաստատում է նաև ԵՄ երկրների փորձը, որտեղ ԱՄՆ-ի համեմատ (բավական է նշել, որ ԱՄՆ-ում պետական սեփականության բաժինը կազմում է 1%, իսկ ԵՄ երկրների միջինը 24% է, իսկ օրինակ Ֆրանսիայում՝ 47%) ավելի մեծ պետական հատվածը և հսկայական բյուջետային ծախսերը երաշխիք չդարձան ճգնաժամի արագ հաղթահարման համար:

Դժբախտաբար ՀՀ «դրամական» իշխանությունները չկարողացան ամբողջությամբ օգտագործել ճգնաժամի դեմ պայքարի գործիքները: Մի կողմից, տոկոսադրույքները մեր հանրապետությունում կապված են ինֆլյացիայի մակարդակի հետ: Սակայն ինֆլյացիան առաջանում է ոչ թե դրամական առաջարկի (փողի զանգվածի) ավելացմամբ (ինչպես դա նկատվել է 1990-

ական թվականներին), այլ ապրանքների գների և ծառայությունների սակագների աճի հետևանքով (հատկապես մենաշնորհ գործունեության ոլորտների), ինչպես նաև դոլարի կուրսը, որը կառավարությունը ստիպված է բարձրացնել, որպեսզի ստանա իր համար անհրաժեշտ միջոցներ խոստացած բյուջետային պարտավորությունների կատարման համար: Այդ պատճառով էլ ինչպես մեզանում, այնպես էլ Արևմուտքում (ԱՄՆ-ում կամ ԵՄ-ում) տոկոսադրույքները «մինչև զրո» հասցնելը անհնար է և, հետևաբար, հնարավոր չէ կտրուկ ավելացնել տնտեսության վարկավորման ծավալները:

ՀՀ 2005-2016թթ. մակրոտնտեսական առանձին ցուցանիշների շարժի ուսումնասիրությունը (տե՛ս, աղյուսակ 1-ը) վկայում է, որ եթե ՀՆԱ-ի աճը 2008-2016թթ. դրամական արտահայտությամբ կազմել է 142.0%, ապա այդ նույն ցուցանիշը դոլարային արտահայտությամբ կազմել է 90.25%, այսինքն՝ դրամական արտահայտությամբ աճի փոխարեն (հավելաճը 42.0%) ունենք 9.75%-ի չափով անկում: Կամ, այլ կերպ ասած, ՀՆԱ-ի դոլարային արտահայտությամբ աճի առաջանցիկ աճի գործակիցը դրամական ՀՆԱ-ի համեմատությամբ կազմել է 157.3%: Նկատենք, որ 2008-2016թթ. դրամ/դոլար միջին տարեկան փոխարժեքի մեծությունը 2008 թվականի 305.97 դրամից 2016թ. հասել է 480.49 դրամի կամ 2016թ. աճը 2008թ. համեմատ կազմել է 157.0%: Կամ այլ կերպ ասած դրամ/դոլար միջին տարեկան փոխարժեքը կազմել է գրեթե այնքան, որքան ՀՆԱ-ի դոլարային աճի նկատմամբ դրամական առաջանցիկ աճի գործակիցը (157.3%): Այսինքն, ՀՆԱ-ի աճի մեծությունը ՀՀ-ում 2008-2016թթ. պայմանավորված է եղել դրամ/դոլար միջին տարեկան փոխարժեքի աճով: Նկատենք նաև, որ սպառողական գների միջին տարեկան ինդեքսը 2016 թվականին 2008թ. մակարդակի համեմատությամբ կազմել է 137.8%: Այստեղից կարելի է եզրակացնել, որ սպառողական գների միջին տարեկան ինդեքսի աճը հիմնականում պայմանավորված է ոչ թե սպառողական արժեքների ավելացմամբ, այլ զուտ արժեքային ավելացմամբ, ինչի արդյունքում կարելի է եզրակացնել, որ դրամ/դոլար միջին տարեկան փոխարժեքի և սպառողական գների միջին տարեկան ինդեքսի մեծությունների տարբերության չափով (157.0% - 137.8%=19.2%) 2016թ. 2008թ. համեմատ 19.2%-ով վատացել է բնակչության կենսամակարդակը:

Մյուս կողմից էլ, հատկապես վերջին տարիներին նկատվել է ոչ միայն ներդրումների նվազում, այն էլ զգալի չափերով, այլև, որ պետական ներդրումները ցածր արդյունավետություն ունեն: Այդպիսի ներդրումները ենթադրում են հարկերի մակարդակի բարձրացում և այդպիսով գործարարներից դրամական միջոցների «խլում», որոնք որ կարող են ներդրվել արդյունավետ նախագծերի մեջ և դրանով իսկ ավելացնել բարիքների ծավալն ու տեսականին: Այդ պատճառով էլ այն ծրագրերը, որոնք նախատեսված են

խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար (դրանք բուլորին քաջ հայտնի են), կամ այն մասնավոր խոշոր կառույցները, որոնք կազինոների և եկեղեցիների տեսքով ավելանում են հանրապետության տարածքում, երբեք էլ ետ չեն գնվելու և դրանք խթան չեն հանդիսանալու հայրենական տնտեսության զարգացման համար: Այդ ծրագրերի համար նախատեսված ներդրումների մի մասը կիոսի օֆշորներ և դրանք կօգտագործվեն արտերկրում: Լավագույն դեպքում հայրենական տնտեսության մեջ ներդրված դրամից մնում է դրա 30-40%-ը մնացածը հոսում է երկրից դուրս, մինչդեռ մնալու դեպքում այդ միջոցները կարող էին ավելի արդյունավետ օգտագործվել և ավելացնել օգտագործվող ռեսուրսների հատույցը: ՀՀ-ում հատկապես անարդյունավետ կառավարման դեպքում տնտեսական աճի տեմպերը 2016թ. կազմել են 0.2%, (տե՛ս աղյուսակ 1-ը), որը 2009թ. -14.1%-ոց անկումից հետո ամենացածր ցուցանիշն է:

Աղյուսակ 1. ՀՀ մակրոտնտեսական առանձին ցուցանիշների շարժը 2005-2016 թվականներին

Տարիները	ՀՆԱ		ՀՆԱ		դրամ/դոլար միջին տարեկան փոխարժեքը		Սպառողական գների միջին տարեկան ինդեքսը, %	
	մլն ՀՀ դրամ	աճը 2008թ. (100%) նկատմամբ, %	մլն ԱՄՆ դոլար	աճը 2008թ. (100%) նկատմամբ, %	դրամ	աճը 2008թ. (100%) նկատմամբ, %	աճը 2008թ. (100%) նկատմամբ, %	նախորդ տարվա նկատմամբ, %
2005	2242881	62.9	4900	42.0	457.69	149.6	92.5	100.6
2006	2656190	74.4	6384	54.7	416.04	136.0	93.1	102.9
2007	3149283	88.3	9206	78.9	392.08	118.8	95.8	104.4
2008	3568228	100.0	11662	100.0	305.97	100.0	100.0	109.0
2009	3141651	88.0	8648	74.2	363.28	118.7	103.4	103.4
2010	3460203	97.0	9260	79.4	373.66	122.1	111.9	108.2
2011	3777946	105.9	10142	87.0	372.5	121.7	120.5	107.7
2012	4266461	119.6	10619	91.1	401.76	131.3	123.6	102.6
2013	4555638	127.7	11121	95.4	409.63	133.9	130.8	105.8
2014	4828626	135.3	11610	99.6	415.92	135.8	134.7	103.0
2015	5032089	141.0	10529	90.28	477.92	156.2	139.8	103.7
2016	5067868	142.0	10525	90.25	480.49	157.0	137.8	98.6

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է՝ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 33, Նույն տեղը, 2013, էջ 23, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 16, Նույն տեղը, 2016, էջ 16, Նույն տեղը, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009, էջ 18, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2017, էջ 7, 127, www.armstat.am, ժամանակագրական շարքեր:

Աղյուսակ 2. ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի դինամիկան (միջին տարեկան մեծությունը, %-ով) և սպառողական գների ինդեքսը (նախորդ տարվա նկատմամբ, %) ՀՀ-ում 2005-2016թթ.-ին

	Տարիներ													2005-2016թթ. միջինը
	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016		
1. ՀՀ վերաֆինանսավորման տարեկան տոկոսադրույքը, %	3,29	3,81	4,83	6,92	6,10	6,92	8,14	8,00	8,10	7,25	10,08	7,66	6,76	
2. Սպառողական գների ինդեքսի հավելածը (նախորդ տարվա նկատմամբ), %	0,6	2,9	4,4	9,0	3,4	8,2	7,7	2,6	5,8	3,0	3,7	-1,4	4,16	
3. ՀՀ վերաֆինանսավորման միջին տարեկան տոկոսադրույքի և սպառողական գների հավելածի տարբերությունը, տոկոսային կետ	3,23	0,91	0,43	-2,08	2,7	1,28	0,44	5,4	2,3	4,25	6,38	9,06	2,60	

Աղբյուրը: կազմվել և հաշվարկվել է՝ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011, էջ 36-37, Նույն տեղը, 2015, էջ 41, Նույն տեղը, 2016, էջ 40-41, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009, էջ 18, Նույն տեղը, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 16, Նույն տեղը, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 16, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2017, էջ 61, ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները, policy-rates/cba.am:

Աղյուսակ 2-ում բերված տվյալներից հետևում է, որ 2005-2016թթ. Միջին տվյալներով ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման միջին տարեկան տոկոսադրույքի և սպառողական գների հավելածի տարբերությունը կազմել է 2.6 տոկոսային կետ, որը սպառողական գների ինդեքսի հավելածի նկատմամբ կազմել է 62.5%, ինչը կարծում ենք բավականին բարձր ցուցանիշ է (այդ հասկացության լավագույն սահմանը 10-15%-ն է), այսինքն ՀՀ-ում այդ տարբերությունը 4-5 անգամ գերազանցում է «նորմալ» հարաբերակցությունը, այստեղից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հետաքրքիրն այն է, որ 2005-2009 թվականներին այդ ցուցանիշը նվազել է 3.23 տոկոսային կետից հասնելով -2.08 տոկոսային կետի: Այսինքն ՀՀ դրամական իշխանությունները պարտավոր էին տեսնել այս ամենը և դրանք հաշվի առնել հետագա քաղաքականության մշակման ժամանակ: Ավելին, փոխանակ այդ տարբերությունը նվազելուն այն հատկապես 2013-2016թթ. Ավելացել է շուրջ 4 անգամ, ինչը ամենևին էլ չի նպաստել տնտեսական աճին, այլ ճիշտ հակառակը ինֆլյացիայի փոխարեն բերել է -1.4% դեֆլյացիայի, իսկ տնտեսական աճը կազմել է 0.2%:

Բերված շարադրանքի եզրակացությունը մեկն է՝ երկրի տնտեսության զարգացման հաջողությունը պայմանավորում են ավելի շատ ոչ թե դրանց հասնելու կառավարման գործիքները, որքան որ դրանցից օգտվելու հմտությունները, արհեստավարժությունը և քաղաքական կամքը:

Վահե ԲՈՅԱԽՉՅԱՆ

Տնտեսական աճի ապահովման հետձգնաժամային հիմնախնդիրները

Բանալի բառեր. Ֆինանսատնտեսական ճգնաժամ, ՀՆԱ, ՀՆԱ-ի աճ, դրամական առաջարկ, բանկային տոկոս

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի արդյունքում քաղաժ դասերը հավասարաչափ ուսանելի են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար: Տնտեսագիտության տեսությունը հնարավորություն է տալիս կիրառելու համապատասխան գործիքակազմ, որը թույլ է տալիս ոչ միայն չեզոքացնել վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները, այլև թույլ չտալ նորերի առաջացումը, կամ գոնե մեղմել դրանց հնարավոր հետևանքները: Հոդվածի հեղինակը քննարկում է տնտեսական աճի ապահովման համար մշակված մակրոտնտեսական մի շարք գործիքները, և մասնավորապես այնպիսի գործիքները, որոնք կիրառվում են դրամավարկային քաղաքականության մեջ:

Ваге БОЯХЧЯН

Посткризисные проблемы обеспечения экономического роста

Ключевые слова: финансово-экономический кризис, ВВП, рост ВВП, предложение денег, банковский процент

Уроки, извлечённые в результате последнего финансово-экономического кризиса в равной степени полезны как для развитых экономик, так и для тех стран, экономики которых пока считаются развивающимися. Экономическая теория предоставляет широкий спектр инструментов, применение которых позволяет не только нивелировать последствия последнего финансово-экономического кризиса, но и не допустить появления тех негативных результатов (или по крайней мере смягчить их), которые присущи любому кризису. Статья посвящена анализу макроэкономических инструментов, которые разработаны для обеспечения экономического роста в посткризисный период.

Vahe BOYAKHCHYAN

Post-crisis problems of ensuring economic growth

Key words: financial and economic crisis, GDP, GDP growth, money supply, bank interest

Lessons learned from the last financial and economic crisis are equally useful for both developed economies and those countries whose economies are still considered to be developing. Economic theory provides a wide range of tools, the application of which allows not only to level out the consequences of the last financial and economic crisis, but also to prevent the appearance of those negative results (or at least to soften them) that are inherent in any crisis. The article is devoted to the analysis of macroeconomic instruments that are designed to ensure economic growth in the post-crisis period. In particular, special attention is paid to those instruments that are inherent in monetary policy of countries.